

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(11 Նոյեմբեր 1990 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ամէն»:
«Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ».
«Մեր ոտքերը հասան քո դռներին, Երուսաղեմ»:
Սիրելի հավատացյալներ.

Առաջին անգամ այս տարվա փետրվարին էր, որ, իբրև Վեհափառ Հայրապետի նվիրակը, տխուր մի առիթով գնացի Երուսաղեմ՝ այնտեղ մասնակցելու Երուսաղեմի Հայոց Պատրիարք հանգուցյալ Տեր Եղիշե արքեպիսկոպոսի թաղման արարողությանց: Այդ տխուր օրերից ամիսներ անց, երբ Երուսաղեմի զինվորյալ միաբանությունն արդեն ընտրել էր իր նոր պատրիարքը մարտ ամսվա վերջին և սպասում էր, որ Հորդանանի և Իսրայելի պետությունների կողմից նրա ընտրության վավերացումից հետո տեղի ունենան գահակալության հանդիսությունները, ահա վերստին, Ամենայն Հայոց Հայրապետի կարգադրությամբ և օրհնությամբ ինձ պատիվ տրվեց ներկա լինելու գահակալության սրտառուչ արարողությանց, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի դարպասներից ներս:

Ողջ աշխարհում ծառայող Երուսաղեմի հայոց վանքի միաբան հոգևորականները այդ օրերին հասել էին Երուսաղեմ, որտեղ տիրում էր խանդավառ մթնոլորտ: Ամեն ոք նոր հույսեր, նոր երազներ և ակնկալություններ էր կապում նորընտիր գահակալի անձի և նրա ապագա աշխատանքների հետ:

Հոկտեմբերի 27-ին, շաբաթ օրը առավոտյան, միաբանությունը հավաքվեց՝ ընտրելու Սրբոց Հակոբյանց վանքի լուսարարապետին, որովհետև, երջանիկ մի զուգադիպությամբ, Երուսաղեմի լուսարարապետ Տ. Գարեգին արքեպիսկոպոսը մեկ ամիս առաջ ընտրվել էր Թուրքիո հայոց պատրիարք, և այդ առթիվ լուսարարապետի աթոռը ևս թափուր էր մնացել Երուսաղեմում: Ձայների մեծամասնությամբ միաբանական ժողովը լուսարարապետ ընտրեց Դավիթ եպիսկոպոսին: Լուսարարապետը Երուսաղեմի սուրբ Աթոռում պատրիարքից հետո երկրորդ պատասխանատու անձնավորությունն է, որի վրա, իբրև ամբողջ միաբանության վանահայրը ու նաև մատակարարը հոգևոր ծե-

սերի և սպասավորության, ծանրանում է միաբանության առօրյա կյանքը հրսկելու և առաջնորդելու պարտականությունը: Նույն օրը, երեկոյան ժամը հինգին, տեղի ունեցավ գահակալության հանդիսությունը: Հանդիսությանը ներկա էին Երուսաղեմում հավատարմագրված բոլոր դեսպաններն ու հյուպատոսները, Լատինաց և Հունաց պատրիարքները, բոլոր քրիստոնյա հարանվանությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Եվրոպայից և Միացյալ Նահանգներից բազմաթիվ ուխտավոր հայեր:

Փառաշուք թափորով, պատրիարքարանի սրահներից եպիսկոպոսների, վարդապետների, սարկավագների և դպիրների ուղեկցությամբ, քշոցով և բուրվառով, նորընտիր պատրիարքը առաջնորդվեց դեպի Սրբոց Հակոբյանց վանքի Գլխադրի սեղանը: Այնտեղ նա ծնկի եկավ Գլխադրի շիրիմի առջև, որտեղ թաղված է Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Հակոբոս առաքյալի գլխատված գլուխը: Այդ խորանի առջև ամենապատիվ պատրիարք հայրը երկյուղածությամբ աղոթեց, ապա տասներկու եպիսկոպոսներով բարձրացավ եկեղեցու սուրբ խորանը և այնտեղ իր ուխտը կատարեց Աստուծո առջև: Այդ ուխտը ուրիշ բան չէր, եթե ոչ մի խնդրվածք Աստծուց, որ պահի-պահպանի հայ Երուսաղեմը, Սրբոց Հակոբյանց միաբանությունը: Այդ ուխտի մեջ Երուսաղեմի Հայոց Պատրիարքը, իբրև Գահակալը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրապետական Աթոռներից մեկի, նշում էր, որ հավատարմությամբ ու նվիրումով պիտի ծառայի Ամենայն Հայոց կաթողիկոսությանը և Հայաստանյայց Սուրբ Եկեղեցուն: Ապա տասներկու եպիսկոպոսներ «Պահպանիչ» կարդացին՝ իրենց ձեռքը դնելով պատրիարք Հոր գլխի վրա: Այնուհետև լուսարարապետի ձեռքով Պատրիարքին հանձնվեց գավազանը: Այս առթիվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայոց Հայրապետի իբրև ներկայացուցիչ, ես ևս ողջույնի խոսքով հանդես եկա, մաղթելով, որ Սրբոց Հակոբյանց միաբանությունը օրհնվի Աստուծո շնորհներով, և ինչպես ժամանակների փոթորիկներից անցնելով՝ անվտանգ և ապահով հասել է մինչև մեր օրերը, այնպես էլ թող Աստված խաղաղ ու անվտանգ պահի ու պահպանի Երուսաղեմի հայոց Ս. Աթոռը, բազում տարիների քաջառողջ կյանք պարգևի նրա գահակալին ու նաև միաբանության գործոց հաջողություն, որպեսզի տեր՝ կանգնի Գլխադրին և Հայաստանյայց Եկեղեցու իրավունքներին Երուսաղեմում:

5-րդ դարից սկսած բազմաթիվ հայ ուխտավորներ գնացել են Երուսաղեմ: Այնտեղ 7-րդ դարում, ինչպես ավանդությունն է ասում, հաստատվել է Հայոց Պատրիարքական Աթոռը: Աթոռի հաստատման հետ պատմության ընթացքում հայ ժողովուրդը, ի գին մեծ դժվարությունների ու ջանքերի, ձեռք է բերել իրավունքներ Սուրբ Տեղյաց վրա, ինչպես Սրբոց Հակոբյանց միաբանության բոլոր շենքերն ու կալվածքները, Բեթղեհեմի մսուրի մեջ «Մարա մատուռը» սբ. Հարության տաճարի մեջ Քրիստոսի գերեզմանի վրա աղոթելու և կանթեղներ վառելու իրավունքը, նույն տաճարում երկրորդ հարկի վրա ունենալու իր մատուռը, ինչպես նաև Գողգոթայի ստորին բաժիններում՝ իր հատուկ աղոթարանները:

Այսօր Հայաստանյայց Եկեղեցին Երուսաղեմի մեջ այնքան իրավունքներ է վայելում, ինչքան Հունաց օրթոդոքս մեծ եկեղեցին է վայելում կամ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին: Մեզ համար շատ կարևոր է Երուսաղեմը, որպես նվիրականացած սուրբ քաղաք, որտեղ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, ապրել, հրաշքներ է գործել, իր անմեղ արյունն է թափել և որտեղ, սակայն, մարդկանց առօրյա կյանքը չի տարբերվում սովորական կյանքից, բայց

հոգևոր աչք պետք է ունենալ՝ տեսնելու և զգալու համար Քրիստոսի ներկայությունը, նրա շունչը ամեն փողոցում, ամեն բարձունքի վրա, ամեն անկյան մեջ, Գողգոթայից մինչև Համբարձման լեռը: Երանելի մի ուխտավոր երբ գընացել է Երուսաղեմ, այսպես է նշել իր այցելությունը. «Երանի որք ունիցիք զյիշատակս ի Սիօն». Սիոնի բարձունքում է, որ Աստված հայտնեց իրեն: Արդյոք հայ ժողովուրդը Սիոնի այս բարձունքում մի մեծ հիշատակ չթողե՞ց այսօր, երբ մենք այժմ գոհություն ենք մատուցում Աստծուն, որ Երուսաղեմի Հայոց Սուրբ Աթոռի վրա բազմեցրեց 96-րդ պատրիարքին, հանձին Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի՝ նոր կյանք պարգևելով պատմական այս Աթոռին, որպեսզի այն վերանորոգվի, բարգավաճի ու զորանա, և նոր սերունդներ այնտեղ իրենց ուխտը կատարեն՝ ծառայելու Հայաստանյայց Սուրբ Եկեղեցուն:

Այս զգացումներով և այս հավատով մենք տարանք Հայոց Հայրապետի օրհնությունը Տ. Թորգոմ արքեպիսկոպոսին՝ պատրիարքին Հայոց Երուսաղեմի, և մաղթեցինք, որ Աստված անսպառ ուժ ու կարողություն տա և նոր տեսիլքներով օժտի նրան, որպեսզի սրբոց Հակոբյանց Աթոռը է՛լ ավելի ծաղկի, և մեր ժողովրդի կարիքներին հասնի:

Սիրելի հավատացյալներ, Պատրիարքի ընտրության առթիվ նաև շնորհավորեցի նրան Հայաստանի պետական իշխանության անունից, հայ ժողովրդի անունից, ձեր բոլորի անունից, որովհետև մենք բոլորս՝ ի Հայաստան թե ի սփյուռս աշխարհի ցրված հայերս, նույն ժողովուրդն ենք, նույն եկեղեցու զավակները, նույն Քրիստոսի որդիները, նույն տեսիլքով և նույն վսեմ իդեալներով ապրող:

Գահակալությունից մի քանի օր անց սրբազան Պատրիարքը, յոթ եպիսկոպոսների ուղեկցությամբ, պաշտոնական այց տվեց Իսրայելի նախագահ Խայիմ Հերցոգին: Այցելության ընթացքում մենք գրեթե զարմացանք, երբ Իսրայելի նախագահը սկսեց խոսել Հայաստանի երկրաշարժի աղետի մասին, հարց տվեց, թե արդյոք մեր երկիրը կարողանալո՞ւ է ոտքի կանգնել և իր վերքերը բուժել: Այս առիթով մենք շնորհակալություն հայտնեցինք նախագահին հայ ժողովրդի, հայ եկեղեցու և հայ պետության անունից, որ Իսրայելի կառավարությունը մեծապես օգտակար եղավ մեզ թե՛ աղետի օրերին և թե՛ աղետից հետո՝ 60-ից ավելի աղետյալներ փոխադրելով Իսրայել և նրանց անհրաժեշտ բուժումը տալով:

Սիրելի ժողովուրդ, ահա այս զգացումներով և ապրումներով վերադարձանք Հայաստան: Սուրբ Էջմիածին, բերելու Վեհափառ Հայրապետին բարի խաբրիկներ, թե Երուսաղեմի հայոց վանքը թևակոխել է նոր մի ժամանակաշրջան, և թե բոլոր միաբաններն անխտիր, իրենց պատրիարքի գլխավորությամբ, պատրաստ են հավատարմորեն ծառայելու Հայաստանյայց Սուրբ Եկեղեցուն: Մենք ևս, սիրելի հավատացյալներ, պետք է լավատե՛ս լինենք, պետք է հավատանք մեր իշխանությանը, պետք է զորավիգ լինենք եկեղեցուն, որը 1700 տարվա պատմություն ունի: Պետք չէ դրսից Հայաստան այցելող կրոնական ինչ-ինչ հարանվանությունների և աղանդների հետևող մարդկանց քարոզություններին հավատալով՝ նրանց ետևից գնանք: Պետք է ամուր կանգնենք Սուրբ Լուսավորչի հավատի վեմի վրա և դիմագրավենք բոլոր փորձությունները: Մեր հավատքի հայրը Սուրբ Գրիգոր Լուսավորիչն է և մեր Սրբություն սրբոցը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, իբրև դարավոր վկան Աստվածորդու էջքին ի Հայաստան: Այս հավատքով պետք է ապրենք, գոյատևենք ու աշխատենք, որպեսզի մեր երկիրը բարգավաճի, և Աստված իր շնորհքը միասնական մեր ժողովրդի վրա առատորեն բաշխի այժմ և հավիտյանս հավիտենից. Ամեն: